

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱԿՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX դարի 20-30-ական թթ.**

Հայաստանի Հանրապետության վերջին տարիների նվաճումները և բացթողումները տարբեր մակարդակի միջազգային մրցումներում, այլև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ձևավորվող քաղաքականությունն անհրաժեշտաբար պահանջում են ուսումնասիրել խորհրդային շրջանում կուտակված փորձն ու ավանդույթները: Վերջին 20 տարիների մարզական կյանքի թռուցիկ դիտարկումն անգամ թույլ է տալիս եզրակացնել, որ սպորտի զարգացումն ու հաջողություններն ուղղակիորեն կապված են պետական աջակցության հետ: Ըստ որում, այդ աջակցությունը ոչ միայն նյութական ներդրումների (դահլիճներ, մարզահրապարակներ, գույք և այլն), այլ նաև կրթական քաղաքականության, քարոզչության, հասարակական կարծիքի ստեղծման մեջ է: Այս իմաստով ուսանելի է խորհրդային տարիների փորձը:

XX դարի 20-ական թվականներին ՀԽՍՀ իշխանությունները մարզական քաղաքականության շրջանակներում սկսեցին լուրջ միջոցներ ձեռնարկել երկրում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման ուղղությամբ: Նորաստեղծ Խորհրդային Հայաստանի առջև ծառայած կարևոր հիմնախնդիրներից մեկը ազգաբնակչության առողջության պահպանման, առողջ ապրելակերպի արմատավորման հիմնախնդիրն էր: Արդեն 1920-ական թթ. Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ եղան ֆիզիկական կրթության և դաստիարակության համակարգի ձևավորմանը: Ֆիզկուլտուրան դիտվեց որպես պետական քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ նպատակաուղղված աշխատավորների աշխատունակության բարձրացմանը: Այդ խնդիրը լուծվում էր անչափ ծանր պայմաններում: Երկրում չկար որևէ մարզական կազմակերպություն, բացի Ամերիկյան սկաուտական ջոկատներից և «Բազե» կազմակերպությունից: Հարկավոր էր ստեղծել նոր տիպի մարզական կազմակերպությունների համակարգ՝ նշված խնդիրները լուծելու համար: Դրանցից առաջինը եղավ «Պատանի կոմունարները» կազմակերպությունը՝ իր մարզական ջոկատներով, որոնք լծվեցին ֆիզիկական դաստիարակության գործին: Ֆիզկուլտուրայի խմբակների ստեղծման գործում կարևոր դեր խաղաց Հայկական դիվիզիայի շտաբին կից պարտուսի բաժինը:

1923թ.-ից սկսվում է կենսագործվել ՀԽՍՀ Կենտգործկոմի «Ֆիզկուլտուրայի խորհրդի ստեղծման մասին» որոշումը: Ստեղծվում են ֆիզկուլտուրայի հանրապետական, շրջանային, գավառային և քաղաքային խորհուրդներ: Կարճ ժամանակ անց՝ ստեղծվում է Անդրգործկոմի Ֆիզկուլտուրայի բարձրագույն խորհուրդը: Նշված խորհուրդների առաքելությունը համակողմանի աջակցությունն էր ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը և այդ բնագավառում գիտամեթոդական և մանկավարժական աշխատանքների կազմակերպումը:¹ Հայաստանում Ֆիզկուլտուրայի խորհրդի գործունեության շնորհիվ 1925թ. կազմակերպվեց «Ինամո» կամավոր մարզական ընկերությունը, ձևավորվեցին «Մպարտակ», իսկ 1927թ.՝ «Շինարար» ընկերությունները: Խորհուրդների քարոզչական գործունեությունը իրագործվում էր մարզական փառատոների, շքերթների, ցույցերի անցկացման և մարզական մրցումների կազմակերպմամբ:

Հատկանշական է, որ 1926թ. հունվարին ՀԽՍՀ Ֆիզկուլտուրայի բարձրագույն խորհուրդը ազգային մարզական խաղերի մշակման գործի մեջ ընդգրկում է հանրապետության գիտական միտքը:² Այդ միջոցառման նպատակը ֆիզկուլտուրայի հանրամատչելիացումն էր: Կարևոր դեր ունեցան այդ գործում 1926թ.-ի Առաջին հանրապետական և 1928թ.-ի Առաջին անդրկովկասյան տոները: 1925թ.-ից հանրապետությունում սկսվում են ֆիզկուլտուրային վերաբերվող աշխատանքների հրատարակումները: Դրանցում առանձնանում է «Ֆիզիկական կուլտուրայի գրադարան» խորագրով մատենաշարը: Հայաստանում ֆիզկուլտուրայի տարածման գործում կարևոր դեր խա-

¹ ԳԱՕՐՑ Գրչ.ՑՑՐ, փ. 611, օռ. 1, ժ. 274, լ.1-4; ժ.24, լ.12.

² Նույն տեղում, փ. 15, թ. 31:

դաց «Անդրկովկասի ֆիզկուլտուրնիկ» թերթը, որը 1926թ.-ից լույս էր ընծայում Անդրֆեդերացիայի Ֆիզկուլտուրայի խորհուրդը:³ Մեծ էր նաև տեղական մամուլի դերը:

ՀԽՍՀ-ում Ֆիզիկական կուլտուրայի կայացմանը նպաստեց նաև Անդրֆեդերացիայի Ֆիզկուլտուրայի բարձրագույն խորհրդի գիտամեթոդական կոմիտեի գործունեությունը և Ֆիզկուլտուրայի հարցերով Անդրկովկասյան խորհրդակցությունը, որը քննարկում էր իրականացվող աշխատանքների և միջոցառումների, մասնագիտական կադրերի պատրաստման հարցերը:

Ֆիզկուլտուրայի զարգացման հիմնական ուղղություններից մեկն էլ դպրոցներում, տեխնիկումներում և բուհերում մանուկների և պատանիների ֆիզիկական դաստիարակությունն էր: Այդ աշխատանքը Բարձրագույն խորհուրդը իրականացնում էր հանրապետական Լուսժողովուհատի հետ համատեղ և Ժողկրթության նոր համակարգի ստեղծմանը զուգահեռ: Այն կապված էր մեծ դժվարությունների հետ: Հանրապետության ոչ մի կրթօջախ չուներ ֆիզկուլտուրայով զբաղվելու համար նախատեսված հատուկ մասնաշենքեր: Հիմնախնդիր էր նաև մանկավարժների, ծրագրերի և մեթոդիկաների համարյա լրիվ բացակայությունը: 1927թ. որոշում ընդունվեց դպրոցներում ֆիզդաստիարակությունը որպես պարտադիր առարկա մտցնելու մասին, իսկ 1928թ. արդեն 1200 աշակերտներ զբաղվում էին արտադասարանական մարզական պարապմունքներով, և 2000 երեխաներ ֆիզկուլտուրայով զբաղվում էին մանկատներում:

Ֆիզդաստիարակությունն իրականացնում էին ֆիզկուլտուրայի հրահանգիչները, որոնք չունեին մասնագիտական կրթություն: Մինչև 20-ական թթ. վերջը ոչ Անդրկովկասում և ոչ էլ Հայաստանում չկային մարզամանկավարժական կադրեր պատրաստող ուսումնական հաստատություններ: 1928թ. հանրապետությունում աշխատող 35 արհեստավարժ մասնագետներից ոչ մեկը բարձրագույն կրթություն չուներ: Մասնագետների պատրաստման խնդիրը հուզում էր բոլորին, և արդեն 1923թ.-ից Անդրկովկասի ՖԿԲԽ-ն բարձրացրեց ֆիզկուլտուրայի մասնագետներ պատրաստելու նպատակով հատուկ բուհի ստեղծման հարցը:⁴ Գոյություն ունեցող վիճակի շտկման համար 1928թ. հինգ մարդ գործուղվեց Մոսկվայի ֆիզկուլտուրայի ինստիտուտ: Բացի այդ հանրապետությունում կազմակերպվեցին ֆիզկուլտուրայի հրահանգիչների պատրաստման կարճաժամկետ դասընթացներ:

Ֆիզկուլտուրայի կայացման մեջ հատուկ տեղ է զբաղեցնում նյութական բազայի ստեղծումը: 1922-1923թթ. հանրապետության շրջաններում և քաղաքներում սկսեցին կառուցել մարզահրապարակներ՝ թեթև ատլետիկայով և մարզական խաղերով զբաղվելու համար: Բայց դա դեռևս իրադրությունից դուրս գալու ելք չէր: Անդրկովկասի առաջին ֆիզկուլտուրայի տոնին պատրաստվելու ժամանակ մարզական կառույցների ստեղծման հարցը ավելի սուր դրվեց: Որոշում ընդունվեց Երևանում մարզադաշտի կառուցման մասին, որ կունենար ֆուտբոլի դաշտ, բասկետբոլի և վոլեյբոլի մարզահրապարակներ: Մարզադաշտին կից կառուցվելու էր նաև լողավազան: 1928թ. ավարտվեցին համալսարանի ուսանողների և «Խորաժամ» ակումբի աշխատակիցների համար դահլիճի կառուցման աշխատանքները: Ինչ խոսք, վերը նշված միջոցառումները դեռևս անբավարար էին նորմալ մարզական վիճակի և սպորտով զբաղվելու համար:

1920-ական թթ. վերջին մարզական շարժումը Խորհրդային Հայաստանում հասավ որոշակի հաջողությունների: Արդեն 1925թ. հանրապետությունում կար 16 տարեկանից բարձր 2590 մարզիկ, իսկ 1928թ. նրանց թիվը հասնում էր 3200-ի: Մարզիկների ընդհանուր թիվը հասնում էր 6880-ի: Նրանք միավորված էին 125 մարզական խմբակներում և կազմակերպություններում:⁵ Առաջին քայլերն էին արվել նաև սպորտի առանձին ձևերի զարգացման ուղղությամբ: ՖԿԲԽ-ն 1925թ. սկսած պարբերաբար մրցումներ էր անցկացնում հանրապետության քաղաքների և շրջանների միջև մարզական խաղաձևերից (ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ), ըմբշամարտից, ծանր և թեթև ատլետիկայից, շախմատից: 1926թ. անցկացվեց առաջին հանրապետական սպարտա-

³ ГАОРСС Груз.ССР, ф. 611, оп. 1, д.5, л.3, 177; Легкая атлетика. Под ред. М. Шимкевича, Ер., 1925.

⁴ ГАОРСС Груз.ССР, ф. 6, оп.1, д.270, л. 17, 3; д. 96, л. 6-9.

⁵ «Ավանգարդ», 2.12.1928թ.:

կիսադան, որը ոչ միայն բացահայտեց մարզական շարժման թույլ կողմերը, այլև վկայեց մարզիկների որոշակի պատրաստվածության մասին: Հայ մարզիկները մասնակցում էին թե՛ անդրկովկասյան և թե՛ միութենական մրցումների: Հայաստանում և մյուս կովկասյան հանրապետություններում ֆիզկուլտուրայի զարգացման արդյունքներն ամփոփեց Անդրկովկասի ֆիզկուլտուրայի առաջին տոնը: Այդ մրցումներում աչքի ընկան հայ մարզիկներ Գ.Իլիկչյանը, Յ.Չարխիֆալակյանը, Թ. Խաղոյանը, Ե. Մարտիրոսյանը, Մ.Մուշեղյանը, Գ.Մեղրակյանը, Ա.Գրիգորյանը, որոնք հետո ձևավորեցին Անդրկովկասի մարմնամարզիկների հավաքականը և մասնակցեցին 1928թ. Մոսկվայի համամիութենական սպարտակիադային: 1928թ. ուղենշային էր ողջ խորհրդային ֆիզկուլտուրայի և սպորտի, այդ թվում նաև Հայաստանում մարզական շարժման համար: Այդ թվականին իշխանությունների կողմից մի շարք կարևոր որոշումներ ընդունվեցին երկրում ֆիզկուլտուրայի հետագա զարգացման խնդիրների մասին: Հատուկ նշանակություն էր տրվում ֆիզկուլտուրայի և սպորտի ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր և հայրենասիրական դաստիարակչական դերին: 1929թ. հուլիսին Լուսժողովուհատի կազմակերպած ֆիզկուլտուրայի մասնագետների խորհրդակցությունն արձանագրեց, որ ֆիզկուլտուրայի բնագավառում տարվող անբավարար աշխատանքի պատճառով անհամապատասխանություն է առաջացել երեխաների մտավոր և ֆիզիկական դաստիարակության միջև: Իրադրությունը պարզելու նպատակով առաջարկվեց բուժատուգումներ անցկացնել ուսումնական հաստատություններում:⁶ Ֆիզդաստիարակության ամբողջական հարցը քննարկվեց Անդրկենտգործկոմի 1929թ. նոյեմբերին տեղի ունեցած խորհրդակցությունում, որը որոշեց այդ խնդրի լուծման պատասխանատվությունը դնել Լուսժողովուհատի վրա: Ֆիզդաստիարակության հիմնախնդիրների լուծման առումով Լուսժողովուհատի անելիքները քննարկվեցին նաև Անդրկովկասյան II համաժողովում (1930թ. հունիս) և բուհերում և տեխնիկումներում ֆիզկուլտուրայի դրվածքի վերաբերյալ Անդրկովկասյան խորհրդաժողովում (1931թ. փետրվար): Այստեղ կոնկրետ միջոցառումներ նախատեսվեցին այդ խնդրի լուծման համար: Հաստատվեցին մարզական պարապմունքների անցկացման ծրագրեր, քննարկվեց բուհերում ֆիզկուլտուրայի և առավոտյան մարմնամարզության մասին հարցը:⁷ Ֆիզկուլտուրային վերաբերող հարցերի շարունակական քննարկումները պետական իշխանության տարբեր մակարդակներում, հասարակական-կրթական կազմակերպություններում, վկայում են խնդրի համաժողովրդական-համապետական նշանակության մասին: 1931-32թթ. էական տեղաշարժեր տեղի ունեցան այդ բնագավառում: Արդեն 1930թ. կային 47 ֆիզմանկավարժներ, որոնցից 5-ը ավարտել էին հատուկ մասնագիտական դպրոցներ, իսկ 1932թ. հանրապետությունում կար 230 մասնագետ:

1930-ական թթ. ծավալվեց զանգվածային մարզական շարժում: Միայն առաջին հնգամյակի տարիներին ֆիզկուլտուրիստների թիվն աճեց 295%-ով և կազմեց 20375 մարդ: 1937թ. հանրապետությունում կար 70000 ֆիզկուլտուրիստ:⁸ Համապատասխանաբար ավելացավ նաև մարզական ընկերությունների թիվը և 1937թ. հանրապետությունում գործում էին թվով 15-ը՝ «Իննամո», «Սպարտակ», «Շինարար», «Կայծակ», «Բուրեվեստնիկ», «Լուկոմոտիվ» և այլն: 1940թ. արդեն կար 25 մարզական ընկերություն, որոնցում հաշվվում էր 31 հազար ֆիզկուլտուրիստ:⁹ Լուրջ հաջողությունների էին հասել առանձին հայ մարզիկներ: Հասարակական կազմակերպությունները, մամուլը, կրթական հաստատությունները ամեն կերպ քարոզում էին նրանց նվաճումները, դեպի սպորտ գրավելով նորանոր պատանիների ու աղջիկների: Սպորտով զբաղվելը դառնում էր հեղինակավոր ու պահանջված: Հայտնի էին ծանրորդներ Մերզո Համբարձումյանի և Ռ.Մանուկյանի, ըմբիշ Ս.Վարդանյանի, բռնցքամարտիկներ Գ.Իսրայելյանի և Ա.Պապյանի անունները: Հատկանշական էր նաև այն, որ խորհրդային մարզիկների սահմանած 25 համաշխարհային ռեկորդներից 2-ը պատկանում էին Ս.Համբարձումյանին և Ռ.Մանուկյանին:

⁶ ГАОПСС Груз. ССР, Ժ. 153, լ.17-18.

⁷ Նույն տեղում, փ. 154, ք. 167-168:

⁸ Նույն տեղում, փ. 270, ք. 3: «Կոմունիստ», 7.09.1936:

⁹ «Կոմունիստ», 21.06.1937:

Բերված փաստերը և դրանց վերլուծությունը վկայում են, որ տնտեսական ծանր պայմաններում անգամ Հայաստանում անցյալ դարի 20-30-ական թվականներին իրականացվել է համակողմանիորեն կշռադատված մարզական քաղաքականություն, ինչը էապես նպաստել է տնտեսական ծանրագույն հիմնախնդիրների առջև կանգնած երկրում ոչ միայն մեծ սպորտի, այլև զանգվածային ֆիզկուլտուրայի հիմնավոր զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորմանը: Ոչ հեռու անցյալի այսպիսի փորձը համոզիչ ապացույցն է այն աքսիոմատիկ ճշմարտության, որ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառներում կատարված բոլոր ներդրումները կարճ ժամանակի ընթացքում լիովին հատուցվում են և ծառայում հասարակական նշանակության բազմաթիվ այլ խնդիրների հաջող լուծմանը:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА В АРМЕНИИ В 20-30-е гг. XX ВЕКА

___ *Резюме* ___

___ *А. Матевосян* ___

В статье на основе фактов и официальных документов рассматриваются основные направления и мероприятия нацеленные на повышение массовости, роли и значения физической культуры и спорта в Армении. Подчеркивается значение государственной политики в сфере спортивных достижений, а также роль физической культуры в решении задач экономического, демографического и культурного развития страны. Показано значение достижений рассматриваемого периода для развития современной физической культуры и спорта.